ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 օգոստոսի 2014 թվականի N 315-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N266 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանի 1-ին կետով հաստատված կարգի 15-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Քասախի N1 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի 2014 թվականի հունիսի 30 -ի N12 նիստի N1 որոշումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2010 թվականի հուլիսի 27-ի <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում խորհուրդների անվանական կազմը հաստատելու և առաջին նիստերը գումարելու մասին>> N266 որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 87-րդ կետի <<***Ջանոյան Նարինե***>> բառերը փոխարինել <<***Սահակյան Վարդուհի***>> բառերով:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ սույն որոշման մասին իրազեկել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Քասախի N1 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2014 թվականի օգոստոսի 01
ք. Հրազդան